

ՔԵՐՈՎԱԲ ՊԱՏԿԱՆՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԵՄԱՏԱՐԱՆ

ՍՈՒՍԱՆԱ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Հալերենի համեմատական ուսումնասիրության ասպարեզում կարևոր է հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի գրաված դիրքի հարցը, որը դրվել է XIX դ. 30-ական թվականներին: Հայերենի համեմատական ուսումնասիրության հիմնադիրները՝ գերմանացի լեզվաբաններ Հ. Պետերմանը, Ֆ. Վինդիշմանը, հայերենը հնդեվրոպական լեզու համարեցին՝ միաժամանակ բարձրացնելով հնդեվրոպական լեզուների շարքում նրա գրաված դիրքի հարցը: Հ. Պետերմանը «Հայերեն լեզվի քերականության» մեջ հայերենի շուրջ հարյուր բառ քննելով՝ դրանք համեմատում է հնդեվրոպական լեզուների համապատասխան բառերի հետ¹: Հետագայում Լ. Դիֆենբախը Պետերմանի աշխատության մասին գրախոսականում վերջինիս կատարած համեմատությունների հիման վրա հայերենը համարում է հնդեվրոպական լեզվաընտանիքի արիական կամ մարապարսկական ճյուղին պատկանող լեզու²: Ֆ. Վինդիշմանը ենթադրում էր, որ հայերենը արիական մի այլ լեզվի համապատասխանող հնչյունական համակարգ ունի, որ հատկապես զենդերենին ու պարսկերենին է հետևում՝ բոլոր յուրահատկություններով³: Ֆ. Բոպը, իր «Համեմատական քերականության» երկրորդ հրատարակության մեջ ընդգրկելով նաև հայերենը և հնչյունական, հոլովական խոնարհման մի շարք երևույթների համեմատելով հնդեվրոպական լեզուների համապատասխան երևույթների հետ, հայերենը իրանյան բարբառ է համարում, միաժամանակ գտնելով, որ այն աքեմենյան պարսկերենից և զենդերենից ավելի հին վիճակ է ներկայացնում⁴: Ֆ. Մյուլլերը գտնում էր, որ հայերենը ոչ թե հին բակտրիականի կամ հին պարսկերենի, այլ մի ուրիշ, մեղանահայտ իրանյան լեզվի սերունդն է⁵:

Գերմանացի լեզվաբանների վերոհիշյալ աշխատություններով ձևավորվեց հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի իրանյան լեզվի տեսությունը:

Հայ իրականության մեջ հայերենի հնդեվրոպական ծագումն է ընդգծել հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանը, որ դրել է նաև հայերենի և սլավոնական լեզուների համեմատական ուսումնասիրության հիմքերը⁶: Հայ լեզվաբան Ք. Պատկանյանը եվրոպացի համեմատաբաններից հետո առաջինն է լրարձրացնում և ուսումնասիրում հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի գրաված դիրքի հարցը: Սովետահայ լեզվաբան Գ. Ջահուկյանը, նկատի ունենալով Ք. Պատկանյանի ներդրումը հայերենի ուսումնասիրության ասպարեզում, իրավացիորեն նրա անունը հիշատակում է XIX դ. 60-70-ական թվականների համեմատաբանների՝ Ֆ. Բոպի, Ֆ. Մյուլլերի, Պ. Լազարդի անուն-

¹ S. H. Petermann, Grammatica linguae apmeniacae, Berolini, 1837.

² Diefenbach L., Anzeig von Petermann („Jahrbücher für wissenschaftliche Kritik“, 1843, B. 2, S. 442).

³ F. Windischmann, Die Grundlage des Armenischen in arischen Sprachstamme („Abhandlungen der Wissenschaften“, 1846, B. 4. S. 48-49).

⁴ F. Bopp, Vergleichende Grammatik des Sanskrit, Zend, Armenischen, Griechischen, Lateinischen, Litauischen, Altslavischen, Gotischen und Deutschen, B. 1, Berlin, 1856, S. 20.

⁵ F. Müller, Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen („Sitzungsberichte der Wiener Akademie der Wissenschaften“, 1877, S. 4).

⁶ Г. Джаукян, Очерки по истории письменного периода армянского языка, Ереван, 1967, с. 22.

ների կողքին⁷։ Համեմատական և բարբառագիտական բնույթի իր աշխատություններում, ի տարբերություն նախորդների, որոնք հենվում էին հիմնականում հնչյունական համակարգի վրա, Պատկանյանը ուսումնասիրում էր նաև ձևաբանական համակարգը և, հայերենը համեմատելով հնդեվրոպական լեզուների հետ, նպատակադրվել էր պարզել հայերենի ցեղակցությունը դրանց հետ։ Նշենք, որ հայ լեզվաբանության պատմության մեջ Ք. Պատկանյանը առավորաբար համարվել է հայերենի իրանյան լեզվի տեսակետի կողմնակից, Մյուլլերի հետևորդը, 1875 թ. Հ. Հյուբշմանը «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում» հոդվածում, քննադատելով Հ. Պատկանյանի, Ֆ. Վինդիշմանի, Ֆ. Բուպի, Պ. Լագարդի, Ֆ. Մյուլլերի ընդունած տեսակետը հայերենի իրանյան ճյուղի լեզու լինելու մասին, գրում է. որ այս հայագետներին է հետևելում նաև Ք. Պատկանյանը «Հետազոտություն հայերենի կառուցվածքի մասին» աշխատությամբ⁸։ Հետագայում Յ. Կարստը նշում է, որ Ք. Պատկանյանը իր վերոհիշյալ աշխատության մեջ ցույց է տվել հայերենի իրանյան բնույթը⁹։

Սակայն Ք. Պատկանյանի աշխատությունների խոր ուսումնասիրությունը քննել է տալիս այլ կարծիք ունենալ այդ հարցի վերաբերյալ։ Թեև սկզբնական շրջանում նա ինչ-որ չափով տուրք է տվել ժամանակի հայագիտության մեջ ընդունված հայերենի՝ իրանյան լեզվի տեսակետին, սակայն նրա ուսումնասիրություններում առաջ քաշված դրույթները վկայում են Ք. Պատկանյանի ինքնուրույն և ճիշտ ուղու վրա կանգնած լինելու մասին։ Մինչև Հ. Հյուբշմանի հիշյալ հոդվածի լույս տեսնելը Ք. Պատկանյանն արդեն հակադրվում էր հայերենի իրանյան լեզվի տեսակետին։ «Այժմ մենք գիտենք, որ հայերենը քերականական ձևերով և բառալին կազմով արիական լեզու է, որ նա հնչյունական կողմով է մոտ իրանյան լեզուներին, բայց մենք գիտենք, որ նա իրանյան նախնական լեզվի բարբառը չէ»¹⁰։

Հայ լեզվաբանության պատմության մեջ արիական եզրույթը ըմբռնվում էր հնդեվրոպական և իրանյան իմաստներով, որ հաճախ հակասությունների տեղիք էր տալիս։ Ք. Պատկանյանը հայերենը արիական, այսինքն՝ հնդեվրոպական լեզու էր համարում և այն հնչյունական տեսակետից էր նմանեցնում իրանյան լեզուներին։ Իրոք, հայերենի և իրանյան լեզուների հնչյունական համապատասխանությունները բավականին շատ են, որոնց հիման վրա հայերենը խալամբ իրանյան լեզու համարվեց։ Սակայն Ք. Պատկանյանը, նկատելով, երկու լեզուների հնչյունական համակարգերի մոտ լինելը, այնուամենայնիվ, դրանք հստակ տարբերում է միմյանցից՝ հայերենը շնչնաջնելով իրանյան լեզուների հետ։ Նա նշում է, որ հայերենի հնչյունական համակարգը ներկայացնելիս օգտվել է Ֆ. Մյուլլերի «Հայերենի հնչյունների մասին» աշխատությունից, որտեղ շատ ավելի պարզ ներկայացված են հայերենի և իրանյան լեզուների հնչյունական համապատասխանությունները¹¹։ Սակայն Ք. Պատկանյանը այլ սկզբունքով է ներկայացնում հայերենի հնչյունական համակարգը։ Ֆ. Մյուլլերը հայերենի հնչյունական համակարգը ներկայացնում է իրանյան բոլոր լեզուների համեմատությամբ։ Ք. Պատկանյանը, ելնելով հայերենի հնդեվրոպական լեզու լինելու սկզբունքից, ընդգրկում է ինչպես իրանյան, այնպես էլ հնդեվրոպական մյուս լեզուների՝ հունարենի, լատիներենի, լիտվերենի, գերմաներենի, սլավոներենի, հնչյունական համապատասխանությունները։ Ազգային լեզուների հնչյունների համեմատության ժամանակ լեզվաբանը որոշակիորեն տարբերակում է հայերենի և իրանյան լեզուների հնչյունները՝ ուշա-

⁷ Գ. Զահարյան, Հին հայերենի հոլովման սխեման և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 30-31։

⁸ H. Hübschmann, Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen [„Kühns Zeitschrift für vergleichende Sprachforschung“ (այսուհետև՝ KZ), 1875, № 23, S. 5].

⁹ J. Karst, Geschichte der Armenischen Philologie, Heidelberg, 1930, S. 5.

¹⁰ К. Патканов, Исследование о составе армянского языка, СПб., 1864 с. XI.

¹¹ Նույն տեղում, էջ XI։

դրություն դարձնելով այն հնչյունների վրա, որոնք կան հայերենում, սակայն բնորոշ չեն իրանյան լեզուներին: Նա առաջիններից էր, որ հնդեվրոպական լեզուների հետ ընդհանրություն ունեցող հնչյուններից բացի հայերենի հնչյունական համակարգում նկատում է լեզվի զարգացման ընթացքում ձեռք բերած նոր, սեփական հնչյունները՝ ց, ձ, ջ, ճ, չ պայթաշփականները, որոնք ազգակից լեզուներում չկան¹²: Հայագիտության մեջ հետազայում հաստատվել է այդ կիսաշփական հնչյունների՝ հայերենի պատմական զարգացման արդյունք լինելը:

Ֆ. Մյուլլերը, հայերենի բոլոր հնչյունները համեմատելով իրանյան լեզուների հետ, դրանք բխեցնում է իրանյաններից¹³: Ֆ. Բոպը սանսկրիտը ևս նախալեզու էր համարում և դրանից բխեցնում հնդեվրոպական լեզուների հնչյունները¹⁴: Ք. Պատկանյանը սանսկրիտը նախալեզու չէր համարում, այլ լատինեերենին, ղենդերենին, հունարենին, հին հայերենին ժամանակակից լեզու¹⁵:

Ք. Պատկանյանը չէր կարող առանձնացնել բնիկ հայերեն բառերը պարսկերեն փոխառություններից: Սակայն ուշագրավ է, որ պարսկերեն փոխառությունները համեմատում է միայն իրանյան լեզուների համապատասխան բառերի հետ: Բնիկ հայերեն բառերի ղգալի մասը, ի տարբերություն Մյուլլերի, Ք. Պատկանյանը համեմատում է սանսկրիտի, ղենդերենի, լատինեերենի, հունարենի, սլավոներենի համապատասխան բառերի հետ: Ք. Պատկանյանի կատարած համեմատություններում այդպես կարելի է տարբերակել հայերենի բնիկ և փոխառյալ բառերի շերտերը: Փոխառյալ բառեր՝ վճար-ղենդ. vičar, պրսկ. gazar, վաճկ-պճլ. vang, պրսկ. bang, քրդ. vank, վաճ-պճլ. vat, պրսկ. had: Բնիկ հայերեն բառեր՝ արբ-սանսկ. arbha, հուն. ἄρβη, լատ. orbus, բերել-սանսկ. bher, ղենդ. bārami, պրսկ. ber, հուն. βέρω:

Ք. Պատկանյանը հայերենի հնչյունները համեմատելիս ընդգրկում է հայերենի բառապաշարի ոչ միայն իրանյան, այլև ասորական՝ գուր, բուրգ, գուրգ, ափսուր, փառոգ, հունարեն՝ կամար, պրակ, փեաուր փոխառությունները: Նա հնչյունական, քերականական որոշ ձևեր փորձում է բացատրել «հայերենի ոգով»՝ հայերենի ներքին զարգացման օրինաչափություններով: Նա առանձնացնում է հայերենին բնորոշ այն հնչյունական յուրահատկությունը, որ հնդեվրոպական լեզուների բաղաձայնով սկսվող բառերը ու և է հնչյուններից առաջ բառասկզբից ստանում են ա հնչյունը, օրինակ՝ սանսկ. ravi-արև, racmi-առասան, պրսկ. rata-առառ¹⁶: Հատկապես պետք է առանձնացնել վերջին օրինակը, որի դիմաց Ք. Պատկանյանը դնում է միայն պարսկերեն համարժեքը՝ փաստորեն դա դիտելով փոխառություն: Վերջինս հայերենի և պարսկերենի հնչյունական տարբերության դրսևորումն է: Նա հաստատում է նաև է-ի երկբարբառային բնույթը ոչ միայն քերականական թեքությունով, այլև բնիկ հայերեն մի շարք բառերով՝ մէջ, մէգ, որոնք հայերենի ներքին հնչյունական օրինաչափություններով են բացատրվում:

Հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի քերականական ձևերի ծագումը բացատրելիս, ի տարբերություն Բոպի և Մյուլլերի, Ք. Պատկանյանը դրանք չի բխեցնում սանսկրիտից ու ղենդերենից, այլ հայերենում տարբերում է հնդեվրոպական նախալեզվից սերած և լեզվի ինքնուրույն զարգացման ընթացքում ձեռք բերած քերականական ձևեր: Նա առնել բայի անցյալ կատարյալի առաջի ձևը հնդեվրոպական կրկնավոր կատարյալի մնացորդ է համարում հայերենում:

Մյուլլերը և նրա հետևորդները հայերենը իրանյան լեզու համարելիս նրա հնչյունական համակարգի համեմատական քննության հիման վրա: Ք. Պատ-

¹² Նույն տեղում, էջ XXII, 16—19:

¹³ S. F. Müller, Beiträge zur Lautlehre der Armenischen Sprachen, Wien, 1863.

¹⁴ S. F. Bopp, նշվ. աշխ.

¹⁵ К. Патканов, նշվ. աշխ., էջ V:

¹⁶ Նույն տեղում, էջ 25:

կանյանը առաջիններից էր, որ հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի գրաված դիրքի հարցը պարզելու նպատակով համեմատական քննության ենթարկեց լեզվի ողջ կառուցվածքը՝ հնչյունական, ձևաբանական, ինչպես նաև բառապաշարը՝ հայերենի տարածքային հարցի ուսումնասիրության հիմքում լեզուն դիտելով իբրև համակարգ։ Այս կերպ Ք. Պատկանյանը հակադրվում է հայերենի իրանյան լեզվի տեսակետին, ընդգծելով, որ հայերենը քերականական ձևերով և բառային կազմով արիական (հնդեվրոպական) լեզու է, որ այն հնչյունական տեսակետից մոտ է իրանյան լեզուներին, բայց իրանյան նախնական լեզվի բարբառը չէ¹⁷։ Նրա ժամանակի համեմատաբանները սահմանափակվում էին հայերենի և իրանյան լեզուների սերտ կապը տեսնելով։ Այդ տեսակետից ուշագրավ է, որ Ք. Պատկանյանը հայերենը համարում է հնդեվրոպական լեզուների տարբեր խմբերը միացնող լեզու։

Ջրնդունելով հայերենի դիրքի մասին ժամանակի իշխող իրանյան լեզվի տեսակետը, Ք. Պատկանյանը իրավացիորեն շեշտում է, որ հայերենի տեղը դեռևս պարզ որոշված չէ գիտության մեջ։ Ուստի իր կողմից առաջադրում և անհրաժեշտ է համարում ոչ միայն գրաբարի, այլև բարբառների ուսումնասիրությունը։ Ասենք, որ հայերենի համեմատական ուսումնասիրությունը հենվում էր միայն գրաբարի վրա, սակայն կենդանի բարբառները՝ հատկապես գրանցում պահպանված հնաբանությունները ևս, հարուստ նյութ են պարունակում։ Եվ Ք. Պատկանյանը հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի գրաված դիրքի հարցը առաջարկում է պարզել՝ օգտագործելով հայերենի ընձեռած հնարավորությունները։

Մինչև Հյուբշմանի տեսության ստեղծվելը Պատկանյանն արդեն հանգել էր հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի առանձին լեզու լինելու տեսակետին։ Համեմատաբանների աշխից վերադառնալով և նրա «Վանի արձանագրությունները և դրանց դերը Առաջավոր Ասիայի պատմության համար» աշխատությունը։ Հեղինակը գտնում էր, որ արիական բարբառները, այսինքն հնդեվրոպական լեզուները, որքան հին են, այնքան արմատներով և թեքություններով ավելի մոտ են արիական (հնդեվրոպական) ընտանիքի եվրոպական կամ ասիական խմբերի հին ներկայացուցիչներին¹⁸։ Լեզվաբանը հայերենի ընդհանրությունը տեսնում է ոչ միայն սանսկրիտի, զենդերենի, այլև հունարենի և լատիներենի հետ։ Այստեղ արժեքավորը և ուշագրավն այն է, որ Ք. Պատկանյանն առաջինն էր որոշակիորեն հստակ տարբերակում հայերենի բառային կազմում եղած երկու շերտերը՝ ընդհանուր արիական (հնդեվրոպական) և հատուկ իրանյան բնույթի բառերը։ Վերջիններս հայերենին են անցել փոխառության ճանապարհով՝ իրանյան լեզուների զարգացման տարբեր շրջաններում։ Իրանյան փոխառությունները հայերենում պահպանվել են առանց փոփոխությունների ենթարկվելու, այն դեպքում, երբ պարսկերենում դրանք բավականին փոխվել են՝ ապառ, աշակերտ, աշխատեմ, բամբիշ, գերեզման, նշխար, նժդեմ, օտար։ Ք. Պատկանյանը գրում է, որ հայերենի բառապաշարում եղած իրանյան բառերն են նրան տալիս իրանյան բնույթ։ Հետազոտողը պետք է ավելի խորանա դեռ շոշափված երևույթների մեջ. «Թափանցելով հայերենի կառուցվածքի մեջ, հետազոտողը չի կարող չտեսնել, որ իրանյան բառերը չեն կարող համապատասխանել լեզվի մնացած արիական (հնդեվրոպական-Ս. Ա.) բառերին և թեքություններին։ Նկատելի է, որ այդ իրանյան թաղանթի տակ ենթահիմքը արիական է (հնդեվրոպական-Ս. Ա.), բայց այլ ճյուղի, այլ զարգացման»¹⁹։ Հյուբշմանից առաջ Պատկանյանը այսպես վերջնականորեն ժխտում է հայերենի իրանյան լեզվի տեսակետը, իրանյան փոխառություններից նրա բառային կազմում տարբերակելով հնդեվրոպական բառերը, այսինքն՝ այն բառերը, որոնք նրա բուն սեփականությունն են կազ-

¹⁷ Նույն տեղում, էջ XVII:

¹⁸ К. Патканов, Ванские надписи и их значение для истории Передней Азии [«Журнал министерства народного просвещения» (այսուհետև՝ ЖМНП), СПб., 1874, с. 125—126].

¹⁹ Նույն տեղում, էջ 126:

մում, Չնայած վերջիններս են հայերենին իրանյան բնույթ տալիս, այն իրականում իր հիմքով հնդեվրոպական լեզու է, իրանյան ճյուղին չի պատկանում, այլ ուրիշ ճյուղի, ուրիշ զարգացման լեզու է: Պատկանյանը իր տեսակետը ապացուցում է մի շարք փաստարկներով: Նա, իրավացիորեն նշելով, որ օսեթերները և քրդերները՝ որպես իրանյան լեզուներ, ավելի մոտ են իրար, դրանով առանձնացնում է նրանցից հայերենը: Մյուս ապացույցն այն է, որ հայերենում կան միայն այդ լեզվին բնորոշ հնչյուններ, որոնք չեն հանդիպում զուտ իրանյան բնույթի բառերում: Այդ առումով նա գրում է. «Ո՞ր իրանյան լեզվում են շլական հնչյունները հասել զարգացման այնպիսի աստիճանի, ինչպես հայերենում՝ ծ, ց, ժ, շ, ց, ց, ձ, ձ, ձ»²⁰: Վերջիններս հատուկ են հայերենին և ոչ թե իրանյան լեզուներին:

Ք. Պատկանյանը հայերենը իրանյան լեզու չի համարում նաև՝ ելնելով պատմական հանգամանքներից. նա ընդգծում է հայերի և իրանցիների տարբեր ծագումը՝ տարբեր ժողովուրդներ լինելը: Ըվ ենթադրում է, որ հայերը կարող էին աստիճանաբար ընդունել իրանյան բառեր և արտահայտություններ, բայց պահպանելով լեզվի սեփական կառուցվածքը: Ք. Պատկանյանը այդ եզրակացությունն է եկել՝ ուսումնասիրելով հայերենի ողջ կառուցվածքը, և իրավացի էր, որ պարսկական փոխառությունները չեն կարող հիմնովին փոխել լեզուն իբրև համակարգ, չեն փոխում նրա բնույթը, այլ սոսկ հարստացնում են այն:

Հայերենի իրանյան տեսակետի կողմնակիցների օրոք հնչյունական օրենքները որոշակի հայտնի չէին, քերականական ձևերը բավարար բացատրված չէին, և հնդեվրոպական լեզվաբանները նրա դիրքի հարցը չլուծվեց: Այն իր լուծումը ստացավ հայերենի համեմատական ուսումնասիրության հաջորդ շրջանում: Պատմահամեմատական լեզվաբանության այդ շրջանի ներկայացուցիչները՝ Երիտքերականները, մերժելով նախորդների հետազոտության ոչ պատմական մոտեցումը, լեզուների համեմատական ուսումնասիրության մեջ առաջ քաշեցին հնչյունական օրենքների կարևորության, պատմականության սկզբունքը: Այդ ուղղության թերություններից մեկն այն էր, որ պատմականությունը կիրառվում էր լեզուների միայն հնչյունական համակարգերը և ոչ թե լեզուները՝ իբրև ամբողջական համակարգեր ուսումնասիրելիս: Այդ նոր մոտեցմամբ սկսում են ուսումնասիրել հնդեվրոպական լեզուները, դրանց թվում նաև հայերենը:

Երիտքերական Հ. Հյուբշմանը «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում» հոդվածում համեմատական քննության ենթարկելով հայերենի հնչյունական համակարգը և բառապաշարը, սահմանելով նրան հատուկ հնչյունական օրենքները՝ առանձնացրեց հայերենի յուրահատկությունները: Դրանով ապացուցեց, որ հայերենի մեջ պահպանված պարսկական բառերը ոչ թե հայերենի բառապաշարի բնիկ տարրն են կազմում, այլ փոխառություններ են և հիմք չեն տալիս հայերենը իրանական ճյուղի բարձու համարելու: Նա, բնիկ հայերեն բառերի համեմատական ուսումնասիրությամբ պարզելով հայերենի բնույթն ու հնդեվրոպական լեզուների մեջ գրաված դիրքը, առաջ քաշեց իր տեսությունը: Հայերենը՝ որպես հնդեվրոպական լեզու, ընդհանրություններ ունի ոչ միայն իրանյան, այլև սլավոնա-լիտվական լեզուների հետ: Ըստ Հյուբշմանի՝ հայերենը արիա-սլավոնա-լիտվական լեզուների շրջանում գտնվում է իրանականի և սլավոնա-լիտվականի միջև²¹:

Հայերենի դիրքի վերաբերյալ Հյուբշմանի տեսությունը հայերենի համեմատական ուսումնասիրության հիմքը դառնալով՝ առաջ մղեց նրա զարգացումը: Ք. Պատկանյանը հայ լեզվաբաններից առաջինը արձագանքեց այդ տեսությանը՝ թե ինչ տեղ է բռնում հայերեն լեզուն հնդեվրոպական լեզուների շրջանում՝ հոգնաբանական և արժեքավորում է Հյուբշմանի տեսությունը, միաժամանակ լրացնում այն իր ներդրումն ունենալով հայերենի տարածքային

²⁰ Նույն տեղում, էջ 127:

²¹ H. Hübschmann, Նշվ. աշխ. (KZ, 1875, № 23, s. 30):

ուսումնասիրության ասպարեզում: Նա նկատում է նաև, որ այդ տեսությունը վերջնական չէ: Հյուբշմանը իր տեսությունը ստեղծեց հիմնականում հենվելով հնչյունական համապատասխանությունների վրա: Ք. Պատկանյանը հայերենի դիրքի հարցին մոտենում է՝ լեզուն դիտելով իբրև համակարգ, իր պատմական զարգացման մեջ, այսինքն, որ այն փոփոխություններ է ունենում ոչ միայն հնչյունական, այլև քերականական համակարգերում և կորցնում շատ հատկանիշներ, որոնք երբեմն դժվարացնում են որոշել, թե լեզուների որ խմբին է դասվում: Ուստի դժվար է «մի գրիչ խաղացնելով» վճռել այն հարցը, թե հայերենը ինչ տեղ է գրավում հնդեվրոպական լեզուների շրջանում²²: Կարևոր է, որ Պատկանյանը հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի գրաված դիրքի հարցի լուծման համար պահանջում է տարժամանակյա մոտեցում՝ քերականական ողջ համակարգի կրած փոփոխությունների ընդգրկումով: Իրոք, այս տեսությունամբ գրվեց հայերենի տարածքային ուսումնասիրության գիտական հիմքը, սակայն այն լրացրին և զարգացրին այն համեմատաբանները, որոնց հետաքրքրում էր, թե հայերենը հնդեվրոպական լեզուներից ծագումնաբանորեն որին է ավելի ազդակից: Հետազայում Հ. Պեդերսենը հայերենը ավելի մոտ է համարում հունարենին և ալբաներենին²³: Ա. Մեյլետը գտնում է, որ հայերենը մոտ է ինչպես արիական, բալթիկ-սլավոնական լեզուներին, այնպես էլ հունարենին²⁴: Հայերենի ազդակցական առնչությունները գերմաներենի հետ ուսումնասիրել է Գ. Զոլտան, որը գտնում էր, որ հայ-գերմանական բառային զուգաբանությունները զիջում են հայ-հունական և հայ-հին հնդկական զուգաբանություններին²⁵:

Ք. Պատկանյանը փաստորեն իրավացի էր, կռահելով հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի դիրքի հարցի պրոբլեմային բնույթը: Նա Հյուբշմանի տեսությունը որոշ առումով լրացրեց՝ առաջադրելով մի շարք կարևոր փաստարկներ, որոնք ինչ-որ չափով նպաստեցին հարցի լուծմանը:

1. Եթե Հյուբշմանը բնիկ հայերեն բառերը առանձնացնում է իրանյան փոխառություններից, ապա Ք. Պատկանյանը անհրաժեշտ է համարում հայերենի բառապաշարից զատել նաև հունական, ասորական, սեմական փոխառությունները: Հյուբշմանը միայն 1895—97 թթ. է հայերենի բառապաշարից առանձնացնում հունական, ասորական, արաբական փոխառությունները: Բնիկ հայերեն բառերի քանակը Ք. Պատկանյանը չէր կարող ճշգրիտ որոշել, ուստի իրավացիորեն դրանց մոտավոր սահմաններն է տալիս՝ ընդգծելով, որ բնիկ հայերեն համարված բառերի մեջ էլ կարող են փոխառություններ լինել: Այդ ժամանակաշրջանում լրիվ բացահայտված չէին հայերենի և մյուս հնդեվրոպական լեզուների հնչյունական, քերականական համապատասխանությունները, փոխառություններից հստակ սահմանազատված չէին բնիկ հայերեն բառերը: Այսպիսով, Ք. Պատկանյանի առաջադրած առաջին պայմանը՝ բնիկ հայերեն բառերը փոխառություններից սահմանազատելը, շատ կարևոր է լեզվաբանության համար, քանի որ այն պարզում է, թե օտար լեզուների հետ նմանություն ունեցող բառերից որն է աներկբայորեն հայերենին պատկանում: Ք. Պատկանյանը ճիշտ է նկատում, որ հաճախ ոչ հայերեն բառերը ընդունվում էին որպես հայկական²⁶: Համեմատական ուսումնասիրության ասպարեզում հնչյունական օրենքների լիովին ձևակերպված չլինելու պատճառով միայն արտաքին նմանության հիման վրա շատ փոխառյալ բառեր բնիկ հայերեն էին համարվում: Պարզվում է, որ բնիկ հայերեն համարվող շատ բառեր փոխառություններ են այս կամ այն հնդեվրոպական լեզվից:

²² Ք. Պատկանյան, Թե ինչ տեղ է բռնում հայերեն լեզուն հնդեվրոպական լեզուների շրջանում (ՎՓՈՐԱՅ, Թիֆլիս, 1880, № 3, էջ 86):

²³ H. Pedersen, Armenisch und Nachbarsprachen („Kuhns Zeitschrift für vergleichende Sprachforschung“, 1906, № 39, S. 336):

²⁴ A. Meillet, Les dialectes indoeuropeens, Paris, 1908, p. 131.

²⁵ Տե՛ս Գ. Դժաւկյան, էջ 27:

²⁶ Ք. Պատկանյան, էջ 86: (ՎՓՈՐԱՅ, 1880, № 3, էջ 86):

2. Համեմատաբանները հայերենը համեմատում էին գիր ունեցող իրանյան հին և նոր լեզուների հետ: Նշելով այն սկզբունքից, որ համեմատական ուսումնասիրությունների ժամանակ կարևոր են ոչ միայն դրական լեզուն, այլև բարբառները, հայերենի դիրքը որոշելու համար Ք. Պատկանյանը առաջ է քաշում երկրորդ կարևոր պայմանը: Բառերը մի լեզվից մյուսին անցնում են ոչ միայն գրբերից, այլև ավելի հաճախ կենդանի հաղորդակցման և մշտական շփման ուղիով: Փոխառությունները պատմական ասպեկտով դիտելով, բարբառները համարելով ցեղային լեզուներ, որոնք կենդանի հաղորդակցման միջոց են ծառայել, նա գտնում է, որ հայերի նման շփումները գիր չունեցող պարսկական ցեղերի հետ անծանոթ են գիտնականներին: Չիմանալով պարսկերենի բարբառների փոխառությունները, զգալի է խոսել այն բառերի մասին, որոնք պարսկերենից անցել են ուրիշ լեզուների: Ք. Պատկանյանը դա պարզաբանում է նրանով, որ հայերեն բառը պարսկերենի հետ համեմատելիս այնպիսի տարբերություն կտա, որը հետազոտողին մոլորության մեջ կգցի: Ենթադրելով, որ այդ տարբերությունը հայերենին բնորոշ առանձնահատկություն է, հետազոտողին էարող է թվալ. որ ենթադրվող բառը հայկական չէ, այլ պարսկական բարբառային բառ, և տարբերությունը ոչ թե հայերենի, այլ պարսկերենի հողի վրա է առաջացել²⁷: Ուստի նման դեպքերում շփությունից. խուսափելու համար Ք. Պատկանյանը հարկ է համարում ընդգծել, որ չպետք է սահմանափակվել գրական պարսկերենով, այլ անհրաժեշտ է դիմել պարսկերենի տարբեր բարբառների տվյալներին: Բնիկ հայերեն բառերը փոխառյալներից տարբերելու համար կարևոր է նաև պարսկերենի բարբառների իմացությունը: Համեմատաբաններից Ք. Պատկանյանը առաջինն է ընդգծել այդ սկզբունքի կարևորությունը: Փոխառությունները համապատասխան պարսկական բառերի հետ համեմատելիս երբեմն ի հայտ են գալիս տարբերություններ, որոնք չեն կարող բացատրվել հայերենի հնչյունական առանձնահատկություններով, այլ պայմանավորված են պարսկերենի բարբառային առանձնահատկություններով: Հետագայում Հ. Աճառյանը հայերենի փոխառությունները քննելիս գտնում է, որ շատ բառերի դոյությունն ու ձևը գուշակելու համար օգնում են ինչպես իրանյան ճյուղի լեզուները, այնպես էլ արդի պարսկական բարբառները²⁸:

Համեմատաբանները հայերենը համեմատել են հիմնականում դրական պարսկերենի հարավ-արևմտյան տարածքի լեզուների հետ՝ հին, միջին և ժամանակակից պարսկերենի: Մինչդեռ հյուսիս-արևմտյան տարածքի բարբառները ավելի գերիշխող են, քան վերոհիշյալ տարածքները: Համեմատաբանները չէին կարող հիմք ընդունել բարբառները, քանի որ դրանք գիր չունեն: Սակայն XX դ. 30—40-ական թվականների հետազոտողները պարզել են, որ, իրոք, ինչպես Ք. Պատկանյանն էր նկատել, պարսկերենի հյուսիսային տարածքի բարբառները ավելի հին փաստեր են ընդգրկում, քան հարավ-արևմտյան բարբառները: Սպահանի բարբառները ավելի հետևողականորեն են պահպանում պատմական շնչունը բառակազմի ձայնավորից առաջ, երբ ժամանակակից պարսկերենում այն ի է: Դա հյուսիս-արևմտյան հնչյունական բնորոշ զուգաբանություն է. պարսկ. barg-տեղ- Սպահանի բարբառ valg, velg²⁹:

3. Պատկանյանը, հիմք ընդունելով հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ այն տեսակետը, որի համաձայն հայերը համարվում են հայկական տարբեր ցեղերի միավորման արդյունք, ցեղեր, որոնք խոսել են իրարից ավելի կամ պակաս չափով տարբերվող բարբառներով, ժամանակակից բարբառները համարում է հնուց գոյություն ունեցած հայկական տարբեր ցեղերի հնագույն բարբառների ժառանգները³⁰: Նշելով իր առաջ քաշած այն

²⁷ Նույն տեղում, էջ 37:

²⁸ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 232:

²⁹ Е. Молчанова, О взаимоотношении книжно-письменного языка и диалектов («Лингвистическая география, диалектология и история языка», Ереван, 1976, с. 348).

³⁰ К. Патканов, Исследование о диалектах армянского языка, СПб., 1869, с. 3—4.

սկզբունքից, որ գրաբարից առաջ և նրա հետ միասին գոյություն են ունեցել հայերենի բարբառները, նա ընդգծում է վերջիններիս կարևորությունը հայերենի համեմատական ուսումնասիրության ասպարեզում: Բարբառների ուսումնասիրությունը հայերենի տարածքային դիրքի հարցի լուծման կարևոր պայմանը համարելով՝ Ք. Պատկանյանը քննել է նաև հայերենի բարբառների և հնդեվրոպական նախալեզվի փոխհարաբերությունը, առաջին անգամ այն բարձրացրել հայ լեզվաբանության պատմության մեջ, նա բարբառային հարբել, անոււմ, քուեք բառերը իրավացիորեն ավելի մոտ է համարում հնդեվրոպական նախալեզվի համապատասխան ձևերին՝ *sr bh (sorbeo), (o) *nomn, *suoseros, քան գրաբարյան տարբերակները: Պատկանյանը առաջիններից է նկատել բարբառներում պահպանված հնաբանությունները, որոնք գրաբարում չեն մնացել կամ գրաբարյան համապատասխան ձևից ավելի հին են: Նշենք, որ բարբառային մի շարք հնաբանություններ ավելի մոտ են հնդեվրոպական նախալեզվի համապատասխան ձևերին: Սակայն դրանք սահմանափակ են, համակարգային բնույթ չունեն, և բարբառների հնչյունական բոլոր առանձնահատկությունները չեն կարող համեմատության եզր դառնալ: Այնուամենայնիվ, կարևորը հնդեվրոպական նախալեզվի և հայերենի բարբառների փոխհարաբերության հարցի բարձրացումն էր Ք. Պատկանյանի կողմից, որը հետագա համեմատաբանների համար ուսումնասիրության առարկա դարձավ: Երևան եկան աշխատություններ, որոնցում հանգամանորեն վերլուծության ենթարկվեցին բարբառային հնաբանությունները³¹:

4. Այս պայմանը շատ կսրևոր է: Ք. Պատկանյանը առաջարկում է հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի դիրքի հարցը քննելիս բառերի հետ միասին քերականական ձևերի ավելի բազմակողմանի վերլուծություն կատարել, որը, անկասկած, շատ կնպաստի հարցի լուծմանը³²: Զ. Հյուբշմանը վերոհիշյալ հարցը քննում է՝ բավարարվելով միայն հնչյունական համապատասխանությունների ուսումնասիրությամբ, չընդգրկելով հայերենի բառային և քերականական նյութը: Հյուբշմանի, Ք. Պատկանյանի ժամանակներում ուշադրության կենտրոնում էր ազդակից լեզուների հնչյունական համակարգի ուսումնասիրությունը: Պատկանյանը նկատել է ինչպես ժամանակի համեմատական լեզվաբանության, այնպես էլ Հյուբշմանի տեսության այդ թերի կողմը, առաջ քաշելով հայերենի տարածքային ուսումնասիրության համար շատ կարևոր պայմանը՝ բառապաշարային և քերականական իրողությունների քննությունը: Նա դրան հանգում է, ելնելով քերականական ձևերի համեմատաբար կաշուն վիճակից, որ պահպանվել է լեզվի զարգացման ողջ ընթացքում: Հետագայում հայերենի տարածքային ուսումնասիրություն կատարելիս համեմատաբանները մեծ ուշադրություն դարձրին նաև լեզվի բառային և քերականական մակարդակների ուսումնասիրությանը: Ք. Պատկանյանի աշխատությունից մոտ հարյուր տարի հետո գերմանացի լեզվաբան Գ. Ջոլտան առաջինն է ընդգրկում բառային զուգաբանությունները՝ նպատակադրվելով պարզել հայերենի ցեղակցությունը վերջիններիս ուսումնասիրության ուղիով³³: Ա. Մեյեն, Զ. Աճառյանը մանրամասն քննության ենթարկեցին հայերենի բառապաշարը իրենց ուսումնասիրություններում՝ վերոհիշյալ հարցը հետազոտելիս³⁴: Այդպես հայերենի տարածքային բնութագրի շատ կողմեր ավելի հստակվեցին, որոշակի դադան տարբեր տարածքային լեզուների բառային և քերականական ընդհանրությունները,

³¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972; Ն. Սիմոնյան, Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները (աշայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, 1979):

³² Ք. Պատկանյան, նշվ. հոգվ. (սփորձ, 1880, № 3, էջ 89):

³³ G. Solta, Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen (Հայերենի տեղը արմատական լեզուների շրջանում), № 1—3, 1960, էջ 106, 116):

³⁴ Զ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, II, Երևան, 1940, 1951, Ա. Մեյեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978:

ինչպես և տարբերությունները հայերենի ու մյուս հնդեվրոպական լեզուների միջև:

Հյուբշմանի տեսությունը վերջնական չհամարելով՝ Ք. Պատկանյանը վերոհիշյալ պայմաններով լրացնում է այն և հայերենի տարածքային դիրքը բնութագրում է հետևյալ կերպ. «Հայերեն լեզուն իրանյան և սլավո-լիտվանյան խմբերի մեջտեղը բռնելով, հնդեվրոպական լեզուների անհետացած (գուցե փոքրասիական) խմբի անկախ ներկայացուցիչն է»³⁵: Հայերենը հնդեվրոպական լեզուների հետ նրա ունեցած առնչակցության վարկածը: Նշելով լեզվի և հասարակության սերտ կապի սկզբունքից՝ նա հայերենի ծագման հարցը քննում է այդ լեզուն կրող ժողովրդի կազմավորման հարցի հետ կապելով: Ք. Պատկանյանը հետազայում հակադրվում է եվրոպացի հայագետներին, որոնք, շնորհունելով հայկական աղբյուրները, հայ ժողովրդի կազմավորումը բացատրում էին տեղաբնիկ ցեղերի և հարավից ներգաղթած հայկական ցեղերի ձուլումով: Հենվելով Մ. Խորենացու և միջնադարյան հայ պատմիչների վկայություններին՝ Ք. Պատկանյանը գտնում է, որ հայ ժողովուրդը կազմավորվել է տեղաբնիկ երկու ցեղերի՝ արմենների և հայերի ձուլումից: Նա Հայաստանի բնակչությունը հնդեվրոպական է համարում³⁶: Լեզվաբանը միաժամանակ նկատել է հայկական և փոքրասիական ցեղերի լեզվական շփումները: Ք. Պատկանյանը հայերենի և փոքրասիական լեզուների փոխհարաբերության հարցում ընդգծում է հայերենի և փոյուզերենի, ինչպես նաև ալբաներենի մի շարք ընդհանրությունները³⁷: Նա հայ-փոյուզական ազգակցության հարցը առաջ քաշում՝ հենվելով հայ հին հնդինականների տվյալների վրա: Նա ենթադրում է նաև փոքրասիական և թրակյան ցեղերի ու հայերի ցեղակցությունը³⁸: Հայերենի ցեղակցական կապերը տարածում է ոչ միայն փոյուզերենի, այլև փոքրասիական ու թրակյան լեզուների վրա:

Հետազայում Գ. Խալաթյանցը, զարգացնելով իր ուսուցչի վերոհիշյալ տեսակետը, գտնում է, որ հայերը ծագումով փոյուզա-թրակյան ցեղեր են³⁹: Հայերենի և Բալկանյան թերակղզու ու Փոքր Ասիայի հին լեզուների փոխհարաբերության հարցերը գտնվել են հայոց լեզվի պատմության և հայերենի համեմատական քերականության մասնագետների ուշադրության կենտրոնում (Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան, Գ. Զահուկյան): Հ. Աճառյանը ևս, հույն պատմագիրների վկայությունների վրա հենվելով, նկատել է թրակա-փոյուզական և հայկական ցեղակցական կապերը⁴⁰: Գ. Ղափանցյանը առաջ է քաշում հայերենի ասիանիկ ծագման տեսությունը, ըստ որի հայերենը ևս ընդգրկվում է ասիանիկ՝ հին փոքրասիական լեզուների խմբի մեջ՝ ուրարտերենի, խուրիերենի հետ միասին: Այդ հետազոտությունների շնորհիվ հայերենում տարբերակվում է նաև ոչ հնդեվրոպական շերտը: Գ. Զահուկյանը, գտնելով, որ հայերենը մի կողմից մոտ է իրանյան լեզուների, մյուս կողմից հունարենի հետ, միաժամանակ ազգակից է համարում փոյուզերենին, քննել է հայերենի և իլիրերենի, հին մակեդոներենի, թրակերենի, պելագերենի, փոյուզերենի, խեթերենի, լուվերենի, պալայերենի, հիերոգլիֆային խեթերենի, լիկիերենի, լիդիերենի, կարիերենի փոխհարաբերության հարցերը⁴¹: Այս ամենով հարստացվեց հայերենի տարածքային ուսումնասիրությունը:

35 Ք. Պատկանյան, նշվ. հոդվ. («Փորձ», 1880, № 3, էջ 89):

36 К. Патканов, նշվ. հոդվ. (ЖМНП, 1874, с. 127).

37 К. Патканов, Исследование о составе армянского языка, с. XIII:

38 К. Патканов, Исследование о диалектах армянского языка, с. 5.

39 Г. Халатянц, Очерк истории Армении в связи с общим ходом событий Персидской Азии, М., 1910, с. 75—77.

40 Հ. Աճառյան, նշվ. աշխ., մաս I, էջ 127:

41 Г. Джаукян, նշվ. աշխ., էջ 46—47:

Այսպիսով, Հյուբշմանի տեսությունից առաջ Բ. Պատկանյանն առաջինն է հանգում հայերենի ոչ իրանյան, այլ հնդեվրոպական ուրիշ ճյուղի լեզու լինելու տեսակետին: Նա միաժամանակ առաջ է քաշում հայերենի և փոքրասիական լեզուների ու թրակերենի հետ ունեցած ցեղակցության վարկածը՝ իր ներդրումն ունենալով հայերենի տարածքային ուսումնասիրության ասպարեզում:

КЕРОПЭ ПАТКАНЯН КАК КОМПАРАТИВИСТ

СУСАННА АМИРДЖАНЫ

Резюме

Армянский языковед К. Патканян внес большой вклад в изучение армянского языка в сравнительно-историческом аспекте и в свете его ареальной характеристики. Вслед за европейскими исследователями К. Патканян изучает структуру армянского языка с целью установить родственность армянского языка.

Он отвергает распространенную среди компаративистов 30-ых гг. XIX в. концепцию иранского происхождения армянского, основываясь на структурных особенностях армянского языка.

До создания теории Гюбшмана о независимом положении армянского языка он сам пришел к этому выводу, а позднее развивал теорию Гюбшмана.

Ему принадлежит научная гипотеза о взаимосвязи армянского языка и языков Передней Азии. Последнее остается актуальной проблемой в армянском советском языкознании.